Հավելված 3

Հաստատում եմ՝ _____ Գ. Գրիգորյան

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական

կենտրոն» հիմնադրամի տնօրեն

«_03_» _____ 20 18 թ.

Կ.Տ.

ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույնով սահմանվում է «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամում (այսուհետ՝ Հիմնադրամ) դասալսումների իրականացման և արդյունքների վերլուծության կարգը:

1. ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Դասալսումների նպատակն է՝
1.1 ուսումնասիրել հիմնադրամում դասապրոցեսի կազմակերպումը և անցկացումը,
1.2 իրականացնել կրթության որակի շարունակական բարելավում,
1.3 խթանել դասավանդողների մասնագիտական աճը,
1.4 իրականացնել փորձի փոխանակում:

2. ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

2.1 Հիմնադրամում դասալսումները իրականացվում են ինչպես համաձայն նախապես կազմված ժամանակացույցի համաձայն, այնպես էլ առանց պլանավորման :
2.2 Դասալսումների ժամանակացույցը կազմում է տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալը:
2.3 Անհրաժեշտությունից ելնելով՝ դասալսումներ կարող են պլանավորվել և իրականացվել նաև Հիմնադրամի տնօրենի, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալի կողմից:
2.4 Դասալսումների ժամանակացույցը ուղարկվում է դասավանդողներին դասալսումների իրականացումից առնվազն մեկ շաբաթ առաջ:
2.5 Դասալսումները իրականացվում են տարեկան նվազագույնը երկու անգամ:

3. ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

3.1 Դասալսմանը կարող է ներկա լինել մեկ կամ մի քանի դասավանդող:
3.2 Որպես հրավիրյալ՝ դասալսմանը կարող են ներկա գտնվել ծնողական համայնքի ներկայացուցիչներ և Հիմնադրամի սոցիալական գործընկերներ:
3.2 Յուրաքանչյուր դասավանդողի մոտ յուրաքանչյուր կիսամյակում իրականացվում է նվազագույնը մեկ դասալսում:
3.3 Դասալսում իրականացնող անձը չի միջամտում դասապրոցեսի ընթացքին, չի կատարում հարցադրումներ և քննարկումներ:

3.4 Դասալսումն իրականացնելիս դասալսողը առաջնորդվում է հետևյալ չափանիշներով՝

- Դասը լավ պլանավորված է և ունի հստակ կառուցվածք:
- Դասավանդողը հետաքրքրություն է առաջացնում թեմայի հանդեպ:
- Դասավանդողն իրականացնում է ուսանողակենտրոն ուսուցում՝ դասին ներգրավելով առավելագույն թվով ուսանողներ :
- Դասավանդողը յուրաքանչյուր ուսանողի հանդեպ դրսևորում է անհատական վերաբերմունք:
- Դասավանդողը բարյացկամ է վերաբերվում ուսանողներին:
- Դասավանդողը կիրառում է դասավանդման նոր մեթոդներ:
- Դասավանդողը ներկայացնում է նախապես պատրաստված ուսումնական նյութեր:
- Դասավանդողը ուսումնական նյութերի կազմման ժամանակ օգտագործում է հավաստի աղբյուրներից ստացած տեղեկատվություն:
- Դասավանդողը օգտվում է նորարարական տեխնոլոգիաներից:

4. ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

4.1 Դասի ընթացքի մասին տեղեկությունները, դիտարկումներն ու առաջարկությունները դասալսողը գրառում է դասալսումների մատյանում:
4.2 Մատյանի համապատասխան մասում վերջինս ներկայացնում է իր եզրակացությունը:
4.3 Դասալսման արդյունքները պարտադիր քննարկվում են դասավանդողի ներկայությամբ :
4.4 Դասավանդման որակի բարելավման նպատակով ելնելով եզրակացության արդյունքներից՝ դասավանդողի մոտ հնարավոր է սահմանել շարունակական դասալսումներ:

Սույն կարգն ուժի մեջ է մտնում հաստատման պահից :

Հավելված 1
01.09.2018թ.-ին հաստատված
Դասալսումների անցկացման
կարգի

Հաստատում եմ՝
Հիմնադրամի տնօրեն
Գ. Ղազարյան
«05» 09 2022 թ.

Դասալսումների անցկացման կարգի
լրամշակում

Հիմնադրամի Դասալսումների անցկացման կարգի 2.3 կետը շարադրել հետևյալ կերպ.

2.3 Անհրաժեշտությունից ելնելով՝ դասալսումներ կարող են պլանավորվել և իրականացվել նաև Հիմնադրամի տնօրենի, որակի ապահովման պատասխանատուի, տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով պատասխանատուի կողմից:

Փոփոխությունն ուժի մեջ է մտնում հաստատման պահից: